տատելոյ յատկապէս սէրն իմ, որ առ քեզ և ապա ձգելով ի միտս խոհեմ բարեկամիդ իմոյ սառն սրտով յետեվիլն գործին իմոյ՝ որ ի Թիֆլիզ, ոչ ձքաբանութեամբ զզվեցուցանելով ունկն բարեկամիդ իմոյ բայց ի մի վկայութեամբ։ Այսինքն՝ ի թուին սեպտեմբերի 24 ինձ գրեցիք, թէ յայսմ ժամանակի լուսափայլ Գիորկինն[3] ի Քսեղէն յետս դառնալէն յետ ընծայելոց էք նմայ իմոյս առ նա գրեցեալն և խոսելոց էք ընդ նմայ յինէն ի նմանէ խնդրեցեալն և ապա պատասխանելոյ ինձ և նոյն ձերոց գրեցեալն է ի ձեռագիրն տէր Դաւթի[4] ձերոց 3 անձանց ձեռամբ իւրաքանչիւր անուն ձեռնադրեալ, պատասխան նորին թէպէտ ձեզ գրեցի, ուրեմն պարտ է ինձ յամբերութեամբ սպասիլ վասն բանիդ ձերոյ պատ[ա]սխանոյ, այլ յատկապէս բարեկամութիւնն իմ, որ առ քեզ, տա համարձակութիւն ինձ ասել։ Ահա ես ունիմ ի ձեռին իմ նամակն լուսափայլ Գեորգի ժառանգ թագաւորին մի և նոյն թուէն սեպտեմբերի 24 թիւն 1794 էն գրեցեալ ի Թիֆլիսու ձեռաց գրօվն տէր Դաւթի և ձեռնադրեալ ի նոյն լուսափայլութենէ, որում պատմի ասելով՝ նա ստացեալ յինէն գրեցեալ թուխթն իմ և ուրախ ելեալ ի վերայ գրեցելոյ իմոյ և պատասխան նորին ի տէր Դաւթի բարեկամէ իմէ լվիցեմ։ Եւ ես ունեմ ի ձեռին իմոյ թուղթն տէր Դաւթի ի նոյն սե[պ]տեմբերի 24 և յամի 1794 թվէն, ի տեղի որոք պատ[ա]սխանապրութեան նոյնոյ լուսայփա[յ]լութեան ինձ յրաւիրէ օգնականութիւն ի վերայ գործոյն հանգուցեալ Նազար Բէրօին։ Սովաւ երկայնամիտ լէր և խնաեայ մեզ ի այտքայն տգէտ համարելոյ և ցանելոյ աւազ ի յաչս մեր, մի լինիցի այսպէս բարեկամ, և գործդ այդ ոչ համեմատի գործոյ պատուականութեանն ձերոյ, քանզի աղտեղի է և բոլորովին ընդդէմ մաքուր պատուոյ ձերոյ։

Եւ արդ յայտնեմ քեզ, որ ես գրեցի ձեր երիս անձանց համապատ[ա]սխանաց իմոց և նոցին արքայական բարձրութեանն և լուսափայլ ժառանգին և այլ բազմաց ամրայփակեալ կնքեալ ի յանուն իւրաքանչ տերանց իմոց և բոլոր ասացեալ գրեանքն փակեալ ի մէջ մի փաքեթս և նոյն փաքեթն գրծագրեալ ի յանուն ձեր, այսինքն՝ մէլիք Աւետիկ և քոյ և տէր Դավթի և նոյն փաքեթն յանդերձ էս գրովն և յատուկ առ տէր Դաւիթն գրածովս երիս օրինակօք կրկին ամրափակեցի և կնքեցի և նշանաւորեցի միանակ ի յանուն տէր Դաւթի և ի անուներկայութենէ նորին մէլիք Աւետկի և քեզ, ասացեալ երիս փաքէթն մինն հանձնելոց եմ Գանջեցի Աբրահամ որդւոյ Մուրադի մէլիք Ապավէն առաքեալ առն, երկուսն Բումբայու վերայ տալոց եմ Բասրայ իմ յամայ պատ[ա]սխանք պարոնաց Յովհաննէս Բէթխահէմ և Վարդան Սարգիս, որ մինն ի նոցանէ երկու փայեակաւ և մինն անցաւոր արամբ յուղարկէ ձեզ ի Թիֆլիզ։

Եւ արդ, խնդրէմ ի քէն՝ որպէս հարկեցեալ, և պատուիրեմ քեզ՝ որպէս բարեկամ, զի շնորհ ընդ յիս ունելով բառցցես աղտեղի քօղաւորութիւնն ի միջէ բարեպէս բարեկամութեան մերոյ գտանելն ձեր, որ մինն մերոց ի վեր յիշեցեալ փաքէթանոց բացէք ի միջի ձեր բոլորեցունցդ, եթէ տերամբ ողորմութեամբ կենդանի լինէք և կամք ձեր լինի պահել յամապատասխանութիւնն մեր, կամ որ ոք ի ձենջ մինչև որ մինտ, որ ունիցէք շնորհ առ իս, ըստ համեմատութեան գրեցելոյ մերոյ գրեանքն մեր հանձնեցէք իւրաքանչ տերանց և մերոց կողմանէ ազատապէս խնդրեցէք ի նորին արքայ[ա]կան բարձրութենէ և նորին ժառանգորդ լու[ս]ափայլ Գիորգինէ, զոր ինչ պատվիրեցի ձեզ, և ի բար[ձր]ութենէ նոցին լուսափայլութեանէ զոր ինչ ստանայցէք բանիւ գործով պատասխան թէ բանիւ բերանով եւ թէ գրեցելօք մերոց փաեակովն յանդերձ ձերոց առ մեզ գրեցելօքն յուղարկեցէք Բասրայ իմոյս ի վեր յիշեցեալ յամայպատասխանաց, զի նոքայ փութով առաքեսցեն մեզ։ Փոխանակ այսքայն շնորհաց քոց լինելոց եմ ի քէն գոհ և շնորհնկալ։

Յաւել քան զայս գրեցի տէր Դավթին՝ բարեկամին մերոյ, յուսամ զի դուք ունիցիք սիրելութիւն ընդ միմեանց, զի նա պատմեսցէ քեզ։ Թէպէտ խոշոր (այլ